Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

« 24 » նոյեմբերի 2023թ.

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2024թ.-ի ընթացքում հիգիենիկ պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով՝ 01.11.2023թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգ: Նշված գնման ընթացակարգին մասնակցել են թվով տասնյոթ մասնակիցներ, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր 13.11.2023թ.-ին՝ ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը կայացել է 14.11.2023թ.-ին՝ ժամը 11:00-ին:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ գնման ընթագակարգի NN 6-9,11,14 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության, իսկ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի աղյուսակներում առկա էին անհամապատասխանություններ: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները կատարել է, բացի 11-րդ չափաբաժնից: Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 11-րդ չափաբաժնի մասով «ԱրմՎիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել այն: Արդյունքում՝ «Արմվիլ Գրուպ»

ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է 11-րդ չափաբաժնի մասով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետով՝ «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				Գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	
«Արմվիլ Գրուպ» ՍՊԸ	06959468	Ք. Վանաձոր, Աղայան 72/16	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. **Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/4»

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԿԱՄՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**